թրքական յարաբերութիւնների կամ ընդհանուր կերպով՝ Թուրքիայի ազգային ու կրօնական փոքրամասնութիւնների իրավիճակի վրայ: Չէ՞ որ Հրանտ Դինքը սպանուեց որովհետեւ յայտարարում էր թէ ինքը թուրք չէ, այլ՝ հայ է՝ Թուրքիայից, այսինքն՝ հարցադրութեան էր ենթարկում իշխանութիւնների պարտադրած «թրքութեան» կամ «թուրք ինքնութեան» բնութագրումը: Չէ՞ որ Դինքը որոնում էր կրօնափոխ հայերին, քաջալերում էր հայի արիւն կրող, հայ նախնի ունեցող թուրքերին վերանայել իրենց ինքնութիւնը եւ անվախօրէն յայտարարում էր, թէ ինչ որ պատահեց 1915-ին՝ ցեղասպանութիւն էր:

Այս պարունակում, Քէմալ Եալչընի աշխատանքը յայտնաբերելու հայ վերապրողներին ու նրանց պատմութիւնը թուրքին պատմելու, մանաւանդ՝ նրա *Seninle Güler Yüreğim* («Հոգիս քեզմով կը խայտայ») գործը մեծ մարտահրաւէր է Թուրքիայի կարծեցեալ միատարր ու միաձոյլ հասարակութեան դէմ նետուած:

Եալչընն էլ իր սերնդակիցների պէս -- հակառակ իր նախորդներին, որոնք բացարձակապէս ոչինչ չգիտէին -- շատ քիչ բան գիտէր հայերի մասին: Ինչպէս Թանըր Աքչամը կամ Օսման Քոքերն են խոստովանում, նրանց սովորեցրել էին, թէ հայերը դաւաճաններ են եղել, որ Թուրքիայի թշնամիների հետ միացած՝ երկրի իշխանութիւնը տապալել են փորձել, այդու եւ հեռացուել են երկրից: Եալչընը նախապէս միայն կցկտուր բաներ էր լսել Ամասիայի, Թաշովայի ու Էրպաայի շրջանների հայերի մասին, հայ աղջիկներ՝ թուրքերի հետ ամուսնացած ու իսլամ դարձած: Յետոյ Գերմանիայում թուրք ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին հետեւելիս, իր